

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵՍ

ՏԱՐԲԵՐԱԿ

ՄԱՍ I (A)

Այս մասի ամեն մի հանձնարարության համար (A1 – A40) տրված են պատասխանի չորս տարբերակներ, որոնցից ճիշտ է միայն մեկը: Պատասխանների թերթիկում խաչ դրեք այն վանդակում, որի համարը համապատասխանում է ճիշտ պատասխանի համարին: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 բալ:

A1. Առանձնացնելով հասարակության հիմնական տարրերը, դրանց փոխկապվածությունը և փոխհարաբերությունները, գիտնականները բնութագրում են հասարակությունը իբրև

1. համակարգ
2. բնության մաս
3. նյութական աշխարհ
4. քաղաքակրթություն

A2. Գլոբալ դեմոգրաֆիական հիմնահարցերից է

1. միջուկային պատերազմի վտանգը
2. կենսաբանական բազմազանության կրճատումը
3. բնական հավասարակշռության խախտումը
4. տարեցների մասնաբաժնի մեծացումը հասարակության կառուցվածքում

A3. Ի տարբերություն ինդուստրիալ հասարակությունների ավանդական հասարակությունները բնութագրվում են

1. սոցիալական մոբիլության բարձր աստիճանով
2. գիտակցության կոլեկտիվիստական ձևերի գերակշռումով
3. ազատ անձի և նրա իրավունքների արժևորումներով
4. քաղաքացիական հասարակության ձևավորումով

A4. Ճիշտ են արդյո՞ք հասարակության իբրև համակարգի մասին այս դատողությունները.

Ա. Հասարակության տարբեր տարրերը փոխկապակցված են և նրա զարգացման ընթացքում փոխազդում են միմյանց վրա:

Բ. Հասարակությունը ազդեցություն չի կրում բնությունից, քանի որ առանձնացված է նրանից:

1. ճիշտ է միայն Ա-ն
2. ճիշտ է միայն Բ-ն
3. երկուսն էլ ճիշտ են
4. երկուսն էլ սխալ են

A5. Կառավարության որոշումը թոշակային կուտակումները հանձնել մասնավոր կենսաթոշակային հիմնադրամների կառավարմանը իրենից ներկայացնում է այս գործունեության օրինակ

1. սոցիալական-վերափոխական
2. կանխատեսման

3. նյութական-արտադրական
4. արժեքային կողմնորոշման

A6. Ճիշտ են արդյո՞ք անձի մասին այս պնդումները

Ա. Անձի հիմնական որակները արտահայտվում են մարդու մեջ ծննդյան պահից:

Ե. Անձի կայացման վրա մեծ ազդեցություն է գործում նրա մերձավոր շրջապատը:

1. Ճիշտ է միայն Ա-ն
2. Ճիշտ է միայն Ե-ն
3. Երկուսն էլ ճիշտ են
4. Երկուսն էլ սխալ են

A7. Գիտության ո՞ր գործառույթի դրսևորումն է հիվանդությունների նկատմամբ դիմացկուն բույսերի և կենդանիների նոր տեսակների ստացումը

1. աշխարհայացքային
2. արտադրական
3. կանխատեսման
4. ճանաչողական

A8. Ո՞ր հատկանիշն է տարբերակում գիտությունը մշակույթի այլ ձևերից

1. աշխարհայացքային ավարտուն համակարգի կառուցումը
2. աշխարհի նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտումը
3. բնության և հասարակության զարգացման օրենքների տեսական հիմնավորումը
4. բնական և սոցիալական իրականության պատկերավոր արտացոլումը

A9. Ո՞ր ծախսերն են փոփոխական

1. հաշվապահի աշխատավարձը
2. բանվորի գործարքային աշխատավարձը
3. պահակի աշխատավարձը
4. տնօրենի աշխատավարձը

A10. Ինտենսիվ տնտեսական աճի գործոն կարող է հանդես գալ

1. ավտոպարկի ընդլայնումը
2. հարևան հանրապետությունից մասնագետների հրավիրումը
3. պղնձի նոր հանքի շահագործումը
4. աշխատանքի գիտական կազմակերպումը

A11. Նշվածներից ո՞վ է համարվում ցիկլիկ /շրջանաձև/ գործազուրկ

1. ծրագրավորողը, որը աշխատանքից ազատվել է այլ քաղաք տեղափոխվելու պատճառով
2. շինարարը, որը գործազուրկ է դարձել կամուրջի շինարարության կասեցման պատճառով
3. բանկի աշխատակիցը, որը աշխատանքից հեռացել է ղեկավարի հետ վեճի պատճառով
4. ֆինանսա-տնտեսական ճգնաժամի ժամանակ սնանկացած ձեռնարկության տնօրենը

A12. Նշված եկամուտներից, ո՞րն է ներառվում ՀՆԱ-ի մեջ

1. հին ավտոմեքենայի վաճառքից ստացված եկամուտը
2. գրողի հոնորարը
3. դրամական փոխանցումը հարազատներից
4. գործարանի հին սարքավորումների իրացումից ստացված եկամուտը

A13. Ապրանքի գինը կիջնի, եթե ապրանքի առաջարկը

1. մնա անփոփոխ, իսկ պահանջարկը կրճատվի
2. կրճատվի, իսկ պահանջարկը մնա անփոփոխ
3. մնա անփոփոխ, իսկ պահանջարկը մեծանա
4. կրճատվի, իսկ պահանջարկը մեծանա

A14. Ճիշտ են արդյո՞ք հարկերի մասին հետևյալ պնդումները

Ա. Առաջադիմական հարկման համակարգի պայմաններում եկամուտների բաշխման անհամաչափությունը փոքրանում է:

Բ. Առաջադիմական հարկման համակարգի պայմաններում հարկային բեռը մեծանում է եկամուտների մեծացման հետ:

1. ճիշտ է միայն Ա-ն
2. ճիշտ է միայն Բ-ն
3. երկուսն էլ ճիշտ են
4. երկուսն էլ սխալ են

A15. Ճիշտ են արդյո՞ք պետության տնտեսական գործառույթների մասին հետևյալ պնդումները

Ա. Շուկայական տնտեսության պայմաններում պետության գործառույթներից է մեծ պահանջարկ ունեցող ապրանքների արտադրությունը:.

Բ. Շուկայական տնտեսության պայմաններում պետության գործառույթներից է եկամուտների վերաբաշխումը:

1. ճիշտ է միայն Ա-ն
2. ճիշտ է միայն Բ-ն
3. երկուսն էլ ճիշտ են
4. երկուսն էլ սխալ են

A16. Տնտեսական աճի ցուցանիշ է համարվում

1. իրական ՀՆԱ-ի ավելացումը անցած տարվա համեմատությամբ
2. նումինալ /անվանական/ ՀՆԱ-ի մեծացումը անցած տարվա համեմատությամբ
3. իրական ՀՆԱ-ի անընդհատ ավելացումը 10 տարվա ընթացքում
4. նումինալ /անվանական/ ՀՆԱ-ի մեծացումը 10 տարվա ընթացքում

A17. Պողոսյանների որդին ընդունվեց համալսարան, և նրանց ընտանիքը որոշեց Գորիսից տեղափոխվել բնակության Երևան: Ո՞ր սոցիալական երևույթի մասին է խոսքը գնում:

1. սոցիալական ադապտացիա
2. սոցիալական ստրատիֆիկացիա
3. սոցիալական մոբիլություն
4. սոցիալական անհավասարություն

A18. Ճիշտ են արդյո՞ք սոցիալական դերերի և կարգավիճակների մասին հետևյալ պնդումները

Ա. Սոցիալական դերերը որոշ չափով որոշում են մարդու վարքը:

Բ. Մարդու վարքը հասարակության մեջ մեծապես որոշվում է նրա սոցիալական կարգավիճակով:

1. Ճիշտ է միայն Ա-ն
2. Ճիշտ է միայն Բ-ն
3. Երկուսն էլ ճիշտ են
4. Երկուսն էլ սխալ են

A19. Հասարակության շերտավորումը և աստիճանակարգային կառուցվածքը կոչվում է

1. սոցիալական ստրատիֆիկացիա
2. սոցիալական մոբիլություն
3. սոցիալական ադապտացիա
4. սոցիալականացում

A20. Ճիշտ են արդյո՞ք սոցիալականացման մասին հետևյալ պնդումները

Ա. Սոցիալականացումը գործընթաց է, որը ապահովում է մարդու ներառումը այս կամ այն սոցիալական խմբի մեջ:

Բ. Սոցիալականացումը առավելապես ուղղված է մարդու տիպական-խմբային հատկանիշների ձևավորմանը:

1. Ճիշտ է միայն Ա-ն
2. Ճիշտ է միայն Բ-ն
3. Երկուսն էլ ճիշտ են
4. Երկուսն էլ սխալ են

A21. Ո՞ր չափանիշով են հասարակության մեջ առանձնացվում կառավարվողները, կառավարողները, քաղաքական առաջնորդները:

1. Ըստ քաղաքացիության
2. Ըստ զբաղմունքի
3. Ըստ իշխանության պատկանելիության
4. Ըստ կրոնական պատկանելիության

A22. Ճիշտ են արդյո՞ք ազգի մասին հետևյալ պնդումները

Ա. Ազգի կազմավորման և զարգացման կարևոր գործոն է պետությունը:

Բ. Ազգի հատկանիշների մեջ հատուկ դեր է խաղում տնտեսական կյանքի ընդհանրությունը:

1. Ճիշտ է միայն Ա-ն
2. Ճիշտ է միայն Բ-ն
3. Երկուսն էլ ճիշտ են
4. Երկուսն էլ սխալ են

A23. Մարդու մասնագիտական դիրքի փոփոխումը

1. սոցիալական մոբիլության դրսևորում է
2. սոցիալական ստրատիֆիկացիայի դրսևորում է
3. սոցիալական անհավասարության դրսևորում է

4. սոցիալական շերտավորման դրսևորում է

A24. Ճիշտ են արդյո՞ք բարոյականության մասին հետևյալ պնդումները

Ա. Բարոյականությունը առավել կարևոր սոցիալական կարգավորիչներից է:

Բ. Բարոյական նորմերը ծագում են պետության հետ և ապահովվում են նրա ստիպողական ուժով:

1. Ճիշտ է միայն Ա-ն
2. Ճիշտ է միայն Բ-ն
3. Երկուսն էլ ճիշտ են
4. Երկուսն էլ սխալ են

A25. Նշվածներից ո՞րն է ժողովրդավարական պետության բացառիկ հատկանիշներից

1. օրենք ընդունելու բացառիկ իրավունք
2. ինքնիշխանություն
3. հարկեր գանձելու բացառիկ իրավունք
4. փոքրամասնությունների իրավունքների ընդունում

A26. Միայն մեծամասնական ընտրական համակարգի դեպքում է

1. քվեարկությունը լինում գաղտնի
2. քվեարկության օրը քարոզը արգելված
3. ընտրողների միշտ բարձր ակտիվություն
4. հաղթում այն թեկնածուն, որը հավաքում է ձայների մեծ մասը

A27. Պետության հատուկ դերը քաղաքական համակարգում կայանում է նրանում, որ այն

1. կարող է պաշտպանել քաղաքացիների շահերը
2. իրավունք ունի բնակչությունից հարկեր գանձել
3. ունի քաղաքական առաջնորդ
4. քաղաքական ուսմունքներ է մշակում

A28. Նշվածներից ի՞նչն է անհրաժեշտ քաղաքական պլյուրալիզմի սկզբունքը իրականացնելու համար

1. քաղաքական ուսմունքների, գաղափարախոսությունների, կուսակցությունների բազմազանություն
2. հասարակությունում տարբեր սոցիալական ինստիտուտների առկայություն
3. պետական մարմինների համաձայնեցված աշխատանք
4. ուժեղ քաղաքական առաջնորդի առկայություն

A29. Կառավարման հանրապետական ձևը, ի տարբերություն միապետականի, ենթադրում է

1. պետության կայացած կառավարման համակարգի առկայություն
2. ինքնիշխանության իրավունք
3. պետությունում ընտրությունների պարտադիր անցկացում
4. պետական հարկադրման միջոցների կիրառման հատուկ իրավունք

A30. Ըստ կառավարման եղանակի Հայաստանը

1. ժողովրդավարական պետություն է

2. դաշնային պետություն է
3. միապետություն է
4. հանրապետություն է

A31. Ի՞նչն է համարվում քաղաքացիական հասարակության գործառնման անհրաժեշտ պայման

1. իրավական պետությունը
2. աշխարհիկ պետությունը
3. պետական մարմինների ներդաշնակ գործունեությունը
4. ուժեղ քաղաքական առաջնորդի առկայությունը

A32. Տվյալ պետությունում նշված ժամանակահատվածում տեղի են ունենում խորհրդարանի ընտրություններ: Խորհրդարանը ձևավորվում է պատգամավորներից, որոնց առաջադրում են հաղթող քաղաքական կուսակցությունները: Այս փաստը թույլ է տալիս բնութագրել այդ երկրի ընտրական համակարգը իբրև

1. համամասնական
2. ժողովրդավարական
3. մեծամասնական
4. խառը

A33. Իրավունքի ճյուղի ներսում առանձնացած փոխկապակցված միասեռ իրավաբանական նորմերի ամբողջությունը անվանում են

1. իրավական նորմ
2. իրավունքի ինստիտուտ
3. իրավական սկզբունք
4. իրավունքի աղբյուր

A34. Վարչական իրավունքի նորմերը կարգավորում են

1. ճանապարհային երթևեկության կանոնները
2. քաղաքացիություն ստանալու կարգը
3. ալիմենտներ վճարելու կարգը
4. հասարակական կազմակերպությունների գործունեությունը

A35. Ֆիզիկական անձը դառնում է գործարար իրավունքի սուբյեկտ, եթե գրանցում է

1. արտադրական կոդպերատիվ
2. ֆերմերային տնտեսություն
3. սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
4. լրիվ պատասխանատվությամբ ընկերություն

A36. Քաղաքացին կազմեց բնակարանը որդուն նվիրելու պայմանագիր: Այս իրավիճակը վերաբերում է

1. ընտանեկան իրավահարաբերություններին
2. աշխատանքային իրավահարաբերություններին
3. վարչական իրավահարաբերություններին
4. քաղաքացիական իրավահարաբերություններին

A37. Պետական ակտերում արտահայտված, պետության կողմից պաշտպանվող վարքի պարտադիր կանոնը կոչվում է

1. բարոյական նորմ
2. գեղագիտական նորմ
3. իրավական նորմ
4. ավանդական նորմ

A38. Ո՞վ է քաղաքացիական դատավարության մասնակից

1. դատախազ
2. մեղադրյալ
3. պատասխանող
4. տուժած

A39. Ամուսինները որոշեցին որդեգրել երեխայի: Այս իրավիճակը վերաբերում է

1. ընտանեկան իրավահարաբերություններին
2. աշխատանքային իրավահարաբերություններին
3. վարչական իրավահարաբերություններին
4. քաղաքացիական իրավահարաբերություններին

A40. Ճիշտ են արդյո՞ք աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու կարգի մասին հետևյալ պնդումները

Ա. Աշխատանքային իրավահարաբերությունների մասնակից կարելի է դառնալ միայն 18 տարին լրանալուց հետո:


Բ. Իշխատանքային իրավահարաբերությունները ձևակերպելու համար անհրաժեշտ է կնքել աշխատանքային պայմանագիր:

1. ճիշտ է միայն Ա-ն
2. ճիշտ է միայն Բ-ն
3. երկուսն էլ ճիշտ են
4. երկուսն էլ սխալ են

ՄԱՍ II (B)

Այս մասի հանձնարարությունների (B1 – B20) պատասխանը բառ է /բառակապակցություն/, թիվ կամ թվերի հաջորդականություն: Մուտքագրեք պատասխանները թեստի մեջ, իսկ հետո տեղափոխեք պատասխանների թերթիկ: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 բալ: B5 – B20 հանձնարարությունները մեկ սխալի դեպքում գնահատվում են 0,25 բալ:

B1. Լրացրեք բաց թողնված բառը /բառակապակցությունը/



Պատասխան _____.

B2. Լրացրեք բաց թողնված բառը /բառակապակցությունը/

Կոնֆլիկտների լուծման եղանակները

| ԵՂԱՆԱԿ | ԲՆՈՒԹԱԳԻՐ |
|------------------|--|
| Բանակցություններ | Կոնֆլիկտի լուծման ուղիների խաղաղ քննարկում |
| ... | Կոնֆլիկտի լուծում փոխզիջումների միջոցով |

Պատասխան _____.

B3. Գտեք այն հասկացությունը, որը ընդհանրացնող է մնացածի համար: Պատասխանում նշել նրա թիվը:

- 1) գիտելիքներ
- 2) տեսություն
- 3) լեզենդներ
- 4) առասպելներ
- 5) վարկածներ

Պատասխան _____.

B4. Գտեք այն հասկացությունը, որը ընդհանրացնող է մնացածի համար: Պատասխանում նշել նրա թիվը:

- 1) նորմատիվ-իրավական ակտ
- 2) իրավունքի աղբյուր
- 3) դատական նախադեպ
- 4) նորմատիվ պայմանագիր

5) իրավական սովորույթ

Պատասխան _____.

B5. Նշված տերմինները, բացառությամբ երկուսի, բնութագրում են "ընտրական համակարգ" հասկացությունը: Գտեք այն երկու տերմինները, որոնք վերաբերում են այլ հասկացության: Նշեք պատասխանում դրանց թվերը:

- 1) էլեկտորատ, 2) պատգամավոր, 3) մեծամասնական համակարգ, 4) դաշնություն, 5) դիտորդ, 6) լեզվաբանություն.

Պատասխան _____.

B6. Նշված տերմինները, բացառությամբ երկուսի, վերաբերում են "իրավախախտում" հասկացությանը: Գտեք այն երկու տերմինները, որոնք վերաբերում են այլ հասկացության: Նշեք պատասխանում դրանց թվերը:

- 1) հասարակության համար վտանգ պարունակող, 2) սոցիալական, 3) հակաիրավական, 4) կոնֆորմիզմ, 5) մեղավոր, 6) արարք

Պատասխան _____.

B7. Առանձնացնել արվեստի գործառույթները.

- 1) Կանխարգելող
- 2) Գեղոնիստական
- 3) Մխիթարող-լրացնող
- 4) Դաստիարակչական
- 5) Հասարակական վերափոխման
- 6) Իրավավերականգնող

Պատասխան _____.

B8. Առանձնացնել ճշմարիտ դատողությունները սոցիալական երևույթների մասին.

- 1) Կոնֆորմիզմը սոցիալական միջավայրի հարմարվելու ակտիվ ձևն է
- 2) Կոնֆեսիոնալ խմբերը առանձնացվում են ըստ սեռա-տարիքային հատկանիշի
- 3) Պրեեստիժը հասարակության կողմից անհատի զբաղեցրած դիրքերի արժևորումն է
- 4) Կոմպրոմիսը կոնֆլիկտի լուծումն է փոխզիջումների միջոցով
- 5) Մարգինալները մարդիկ են, որ իջել են հասարակության "հատակ"
- 6) Նուկլեար ընտանիքը բազմասերունդ ընտանիքն է

Պատասխան _____.

B9. Առանձնացնել "պոստինդուստրիալ հասարակության"-ը բնորոշ հատկանիշները.

- 1) տեղի է ունենում ուրբանիզացիա
- 2) ապրանքների արտադրությունից առաջնայնությունը անցնում է ծառայությունների արտադրությանը
- 3) հասարակության տնտեսական հիմքն է արդյունաբերությունը
- 4) տնտեսության գլխավոր շարժիչ ուժն են դառնում գիտական մշակումները
- 5) հասարակությունում առկա է աշխատանքի բաժանում

6) արտադրական ռեսուրս են դառնում ինֆորմացիան և գիտելիքը

Պատասխան _____.

B10. Առանձնացնել այն դրույթները, որոնք արտացոլում են ընտանիքի տնտեսական գործառույթը

- 1) ընտանիքի անչափահաս անդամների նյութական օգնությունը
- 2) սեփական տնտեսության վարումը
- 3) հոգևոր փոխհարստացման պահանջմունքների բավարարում
- 4) սեփական բյուջեի առկայություն
- 5) ընտանիքի անդամների վարքի բարոյական կարգավորում
- 6) սպառողական գործունեության կազմակերպում

Պատասխան _____.

B11. Նշեք իրավական պետությունը առանձնացնող բնութագրումները

- 1) քաղաքացիների իրավական մշակույթի բարձր մակարդակ
- 2) իրավունքի գերակայությունը հասարակությունում
- 3) սահմանադրության առկայություն
- 4) օրենքների մարդասիրական և արդար բնույթ
- 5) իշխանությունների տարանջատման սկզբունքի պարտադիր իրականացում
- 6) պետության իրավապահ գործունեություն

Պատասխան _____.

B12. Նշեք իրավունքի աղբյուրները

- 1) դպրոցի տնօրենի հրամանը
- 2) պաշտպանության նախարարի հիշողությունները
- 3) դիմում երկրի նախագահին
- 4) կառավարության որոշումը
- 5) թերթի հոդվածը նոր տեսակի հարկման մասին
- 6) "Կրթության մասին" օրենքը

Պատասխան _____.

B13. Որոշեք գործունեության տեսակների և դրանց բնութագրումների համապատասխանությունը.

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ

ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄՆԵՐ

Ա) Ստեղծագործություն

1) միտված է ոչ այնքան արդյունքի, որքան բուն գործընթացի վրա

Բ) Աշխատանք

2) մարդու կողմից գիտելիքների և իմացությունների ձեռքբերում

Գ) Խաղ

3) միտված է գործնականում օգտակար արդյունքի ձեռքբերմանը

Դ) Հաղորդակցություն

4) մարդկանց միջև փոխհարաբերություն
ինֆորմացիայի փոխանակման նպատակով

Ե) Ուսում

5) որակապես նորի ստեղծում

Ընտրված թվերը գրել համապատասխան տառերի տակ

| Ա | Բ | Գ | Դ | Ե |
|---|---|---|---|---|
| | | | | |

B14. Որոշեք պետության կողմից տնտեսության վրա ազդելու մեթոդների և դրանց ձևերի համապատասխանությունը.

ՄԵԹՈԴՆԵՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ

Ա) Դրամավարկային քաղաքականություն

1) ուղղակի ազդեցություն (վարչական մեթոդների կիրառում)

Բ) Օրենսդիր գործունեություն

2) անուղղակի ազդեցություն (տնտեսական մեթոդների կիրառում)

Գ) Պետական պատվերների ընդլայնում

Դ) Պետական հատվածի զարգացում

Ե) Գործունեության առանձին տեսակների լիցենզավորում

Զ) Հարկային և բյուջետային քաղաքականություն

Ընտրված թվերը գրել համապատասխան տառերի տակ

| Ա | Բ | Գ | Դ | Ե |
|---|---|---|---|---|
| | | | | |

B15. Որոշեք սոցիալական իրավիճակների և հասարակության ենթահամակարգերի համապատասխանությունը.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳ

Ա) զանգվածային սպառման ապրանքների արտադրություն

1) տնտեսական

Բ) հանրաքվեի անցկացում

2) քաղաքական

Գ) հասարակական կազմակերպությունների մասին օրենքի ընդունում

3) հոգևոր

Դ) արկածային վեպի ստեղծում

Ե) գիտական հետազոտության իրականացում

Ընտրված թվերը գրել համապատասխան տառերի տակ

| Ա | Բ | Գ | Դ | Ե |
|---|---|---|---|---|
| | | | | |

B16. Որոշեք, թե ո՞ր տեսակի գործազուրկների դասին են պատկանում նշված քաղաքացիները:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ

- Ա) ինժեները, որը գործից հեռացել է
- դեկավարության հետ կոնֆլիկտի պատճառով
- Բ) քաղաքապետարանի աշխատակիցը, որը ստիպված էր գործից հեռանալ, քանի որ համակարգչային աշխատանքի հմտություններ չունեի
- Գ) քիմիկոսը, որը հեռացել է աշխատանքից, քանի որ այլերգիա ուներ որոշ նյութերի նկատմամբ
- Դ) անշարժ գույքի գործակալը, որը աշխատանքից զրկվեց ֆինանսա-տնտեսական ճգնաժամի պայմաններում
- Ե) բուհի շրջանավարտը, որը աշխատանք է փնտրում

- 1) ֆրիկցիոն
- 2) կառուցվածքային
- 3) ցիկլիկ

Ընտրված թվերը գրել համապատասխան տառերի տակ

| Ա | Բ | Գ | Դ | Ե |
|---|---|---|---|---|
| | | | | |

B17. Որոշեք ազգամիջյան կոնֆլիկտների դրսևորումների և դրանց պատճառների համապատասխանությունը

ԱԶԳԱՍԻԶՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

- Ա) քաղաքացիական իրավահավասարության պահանջները
- Բ) մայրենի լեզվի պահպանման և զարգացման պահանջները
- Գ) էթնոսների պայքարը նյութական ռեսուրսների տիրապետման համար
- Դ) աշխատանքի ընդունվելու, վարձատրության, կրթություն ստանալու հավասարության պահանջները
- Ե) կոնտակտող ժողովուրդների թվաքանակի հարաբերակցության փոփոխություն միգրացիայի և բնակչության բնական աճի մակարդակի տարբերության հետևանքով

- 1) տնտեսական
- 2) սոցիալական
- 3) լեզվա-մշակութային
- 4) էթնոժողովրդագրական

Ընտրված թվերը գրել համապատասխան տառերի տակ

| Ա | Բ | Գ | Դ | Ե |
|---|---|---|---|---|
| | | | | |

B18. Որոշեք պետությունների տեսակների և դրանց դասակարգման սկզբունքների համապատասխանությունը

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- Ա) ունիթար
- Բ) ավտորիտար
- Յ) հանրապետություն
- Դ) դաշնային
- Ը) տոտալիտար

- 1) ըստ պետական-տարածքային կառուցվածքի
- 2) ըստ կառավարման եղանակի
- 3) ըստ քաղաքական վարչակարգի

Ընտրված թվերը գրել համապատասխան տառերի տակ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա | Բ | Գ | Դ | Ե |
| | | | | |

B19. Կարդացեք տեքստը, որի յուրաքանչյուր դրույթ /նախադասություն/ համարակալված է.

(Ա) Առաջին պետությունների ի հայտ գալու հետ ծագում է նաև իրավունքը: (Բ) Օրենսդիր գործունեության մենաշնորհը պետության կարևորագույն հատկանիշներից է: (Գ) Սակայն օրենսդրությունը միշտ չէ, որ արդյունավետ է քաղաքացիների շահերի պաշտպանության գործում: (Դ) Պետք է ընդունել նաև, որ բնակչության իրավական մշակույթը մնում է ցածր մակարդակում: (Ե) Իրավական դաստիարակության թերությունները բացասական են ազդում հասարակության բարոյական մթնոլորտի վրա:

Որոշեք, տեքստի ո՞ր դրույթներն են կրում

- 1) փաստական բնույթ
- 2) արժեվորող-գնահատող բնույթ
- 3) տեսական պնդումների բնույթ

Ընտրված թվերը գրել համապատասխան տառերի տակ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա | Բ | Գ | Դ | Ե |
| | | | | |

B20. Կարդացեք տեքստը, որտեղ բաց են թողնված որոշ բառեր: Տրված ցուցակից ընտրեք համապատասխան բառերը, որոնք պետք է լինեին բաց թողնված տեղերում:

“...../Ա/.....ինստիտուտ” հասկացությունը օգտագործվում է բավականին լայն իմաստով: Խոսում են ընտանեկան ինստիտուտի, կրթական ինստիտուտի, առողջապահական ինստիտուտի,/Բ/..... իշխանության ինստիտուտի, կրոնական ինստիտուտի և այլնի մասին: Դա մարդկանց, խմբերի, հաստատությունների կայուն ամբողջություն է, որոնց գործունեությունը ուղղված է կոնկրետ հասարակական/Գ/..... իրականացմանը: Այդ գործունեությունը կառուցվում է որոշակի/Դ/....., կանոնների հիման վրա: Ինստիտուտները կոչված են կազմակերպել մարդկանց համատեղ գործունեությունը այս կամ այն սոցիալական/Ե/..... բավարարելու նպատակով: Այսպես, ընտանիքը իբրև ինստիտուտ բավարարում է մարդկային սեռի/Զ/..... և երեխաների դաստիարակման պահանջմունքը:

Ամեն մի բառ տրված ցուցակից կարող է օգտագործվել միայն մեկ անգամ: Ուշադրություն դարձրեք տրված բառերը ավելի շատ են քան բաց թողնվածները:

- 1) ամբողջություն
- 2) համակարգ
- 3) հասարակություն
- 4) սոցիալական
- 5) վերարտադրություն
- 6) պահանջմունք

- 7) գործառույթ
- 8) պետական
- 9) նորմ

Ընտրված թվերը գրել համապատասխան տառերի տակ

| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |